

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ № 3-4 (28-29) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 37.016 : 811.19

ՀԱՅԵՐԵՆԻ՝ ԻԲՐԵՎ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ
ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ

Լ. Կ.ՄՈՌԱԴՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան

0010, Երևան, Տիգրան Մեծի 17

e-mail: lusine.mooradyan2011@yandex.ru

Վերջին տարիներին, արտասահմանցի անգլախոս ուսանողների Հայաստանում սովորելու ցանկությանը զուգահեռ, տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում անհրաժեշտաբար կազմվել են հայերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման ծրագրեր, մշակվել է մեթոդական գրականություն: Այնուամենայնիվ, առաջադիր խնդիրն ամբողջությամբ ուսումնասիրված չէ, և որոնումները շարունակվում են: Տարիներ շարունակ Խորհրդային Հայաստանի մանկավարժներն ու լեզվի մշակները հայերենն իբրև մայրենի լեզու են դիտարկել և ուսումնասիրել, կատարել զանազան մեթոդական մշակումներ մայրենիի դպրոցական և բուհական դասավանդման գործընթացում: Հայերենի՝ իբրև օտար լեզվի իմացության տարբեր մակարդակներում դասավանդելու համար կազմվել ենք ծրագրեր, ձեռնարկներ, <<Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն>> դասագիրքը, երկարամյա աշխատանքային փորձի հիման վրա մշակվել է մեթոդաբանություն: Ուստի, այս հոդվածում ներկայացնում ենք հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսումնասիրման գիտամեթոդական հիմունքների վերաբերյալ մեր դիտարկումները:

Բանալի բառեր. *հայերեն, անգլախոս ուսանողներ, օտար լոզու, մեթոդաբանություն
Ներկայացված է խմբագրություն 25.09.2015 թ.*

Հայաստանի անկախացումից հետո օտարերկրացի անգլախոս ուսանողներին արդյունավետ կերպով հայերեն դասավանդելու մեթոդական փնտրտուքները հիմնականում ունեն երեք ուղղվածություն.

ա) օտարերկրացի ուսանողներին նախապատրաստել հայկական լեզվական միջավայրին ինտեգրվելուն,

բ) օտարերկրացի ուսանողներին նախապատրաստել հայերենով մասնագիտական կրթություն ստանալուն,

գ) հայերեն ուսումնասիրել ցանկացողներին ապահովել համապատասխան գիտելիքներով:

Հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսումնասիրության գործընթացն իրականացվում է հիմնական որակական սկզբունքներով ու գործնական եղանակներով, որոնցից շատերը համընդհանուր են այլ օտար լեզուների դասավանդման առումով և շատ տարածված ու ընդունված են մանկավարժության մեջ: Օտար լեզվի դասավանդման ռազմավարության գերնպատակն է՝ որքան հնարավոր է կարճ ժամանակահատվածում ապահովել բարձր արդյունավետություն: Սակայն այսպիսի նպատակապաշար ուղղվածություն ունենալուց

առաջ հարկավոր է հասկանալ, թե որ ուղղություններն են առավելապես շահեկան ու նպատակային:

Հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման մեթոդաբանության առավել հիմնարար ուղղություններն են.

1. Կառուցվածքային-լեզվաբանական,
2. Իմացական,
3. Միջանձնային փոխազդեցության,
4. Կիրառական-հաղորդակցական:

Կառուցվածքային-լեզվաբանական ուղղությանը մեծ տեղ հատկացնելով՝ ավելի շատ սովորեցնում ենք տվյալ լեզվի պատմությունը, քան՝ բուն լեզվական իրողությունները: Այստեղ, ըստ էության, հետին պլան են մղվում գործնական-կիրառական հմտությունները:

Իմացական ուղղության հիմքում ընկած են ուսուցման այն մեթոդները, որոնք հատուկ են համարյա բոլոր օտար լեզուների ուսուցման մեթոդիկաներին: Դրանք, հենվելով հիշողության վրա, ձևավորում են ունակություններ՝ ըստ սովորողի պահանջմունքների կամ խմբի առջև դրված առանձնահատուկ խնդիրների:

Միջանձնային փոխազդեցության ուղղությանը հարող մեթոդները հենվում են սովորողի և սովորեցնողի տարիքային, անհատական ֆիզիոլոգիական, զգայական տարբերությունների, առանձնահատկությունների վրա և ըստ այդմ՝ ենթադրում են հարաբերությունների կառուցումը՝ հիմնված ընդհանուր մանկավարժության և տարիքային հոգեբանության վրա: Այս ուղղությունը կարևորում է օտար լեզու սովորելու համար անկաշկանդ միջավայր ստեղծելու անհրաժեշտությունը:

Կիրառական-հաղորդակցական ուղղությունը հենվում է հաղորդակցական գործառույթի վրա, և անհրաժեշտ է համարում անկախ տվյալ տարածաշրջանում գերիշխող լեզվական միջավայրից՝ անընդհատ կիրառելի դարձնել ուսուցանվող լեզուն: Հայերենը՝ որպես օտար լեզու ուսուցանելիս Հայաստանում գերիշխող լեզվական միջավայրն ու յուրացվելիք լեզուն համընկնում են, և սա նոր լեզու սովորելու և սովորեցնելու գործում շատ նպաստավոր գործոն է, ուստի համապատասխան ծրագիր ունենալու դեպքում կապահովենք լավագույն արդյունքներ:

Հայտնի է, որ յուրաքանչյուր առարկայի դասավանդման հաջողությունը անառարկելիորեն պայմանավորված է դասավանդողի տեսական-մեթոդական պատրաստվածության մակարդակով, ուղղակիորեն կախված է յուրաքանչյուր դասի կազմակերպման նախապատրաստումից և բարոյահոգեբանական այլ հանգամանքներից: Արտասահմանցի անգլախոս ուսանողներին հայոց լեզու դասավանդելու յուրաքանչյուր փուլ պետք է լինի գիտականորեն ու մեթոդապես հիմնավորված, քանի որ մենք գործ ունենք արդեն իսկ դպրոցական կրթությունն ավարտած, հաճախ մի քանի լեզու տիրապետող ուսանողի հետ: Արտասահմանցի անգլախոս ուսանողների հետ իրականացվող հայերենի յուրաքանչյուր դաս իրապես ստեղծագործական գործընթաց է: <<Մանկավարժական խնդիրը ստեղծագործական բնույթ ունի, իսկ նրա լուծումը պրոֆեսիոնալ մակարդակով ստեղծագործական աշխատանք է: Այն պահանջում է տեսական լուրջ պատրաստություն, տրամաբանություն, ինտուիցիա և փորձ>>:²⁰ Հաճախ դասագործընթացում իրադրությունը թելադրվում է հենց ուսանողների կողմից, քանի որ համեմատական մեթոդի օգնությամբ նրանք կարողանում են իրենց մայրենի լեզվի կամ միջնորդ լեզվի հիման վրա կատարել ինքնուրույն եզրահանգումներ և ուշագրավ հարցադրումներ առաջարկել, որոնց կարող է պատասխանել լեզվաբանությանն ընդհանուր առմամբ քաջատեղյակ, մի քանի լեզվի տիրապետող մասնագետը: Ուստի,

²⁰ . Բայան Ա. Ա., Խնդիր-առաջադրանքներ մանկավարժությունից, Երևան, 1989 թ., էջ 5:

ստեղծված ծրագրերով չի կարող սահմանափակվել արդեն իսկ նախապատրաստված դասի գործընթացը, և արտասահմանցի անգլախոս ուսանողներին հայոց լեզու դասավանդողը պետք է ելակետ ունենա մի քանի կարևոր հանգամանքներ.

1. Ո՞ր երկրից են ուսանողները,
2. Ի՞նչ ազգության են ուսանողները,
3. Ինչպիսի՞ խմբի հետ է աշխատում (խառը, թե՞ միատարր),
4. Գիտելիքների ինչպիսի՞ պաշար են կուտակել նախորդ տարում (եթե ուսանել են),
5. Ո՞րն է տվյալ դասի նպատակը,
6. Ի՞նչ հիմնական խնդիր ունի դասավանդողը դասագործընթացում:

Աշխարհագրական տարբեր միջավայրերից եկած ուսանողներն ունեն տարբեր լեզվարտասանական ապարատ. նկատի ունենալով այս հանգամանքը՝ դասախոսը զանազան հնչական վարժություններ պետք է կազմի: Անհրաժեշտ է առաջին իսկ դասին, երբ սովորեցնում ենք <<Ո՞վ եք դուք ազգությամբ>> հարցը և դրա հնարավոր պատասխանները, պարզել ուսանողի ազգությունը և, նախապես ծանոթ լինելով նրա մայրենի լեզվի կարևոր օրինաչափություններին, հետագայում զուգահեռներ անցկացնել այս կամ այն քերականական նյութը բացատրելիս: Նշենք, որ դասը միատարր խմբերում անցկացնելը շատ նպատակահարմար է և ավելի արդյունավետ, սակայն երբեմն խումբը համալրվում է տարբեր ազգությունների պատկանող ուսանողներով: Տվյալ դեպքում դասավանդողից պահանջվում են լրացուցիչ հմտություններ խմբային մտածողություն ձևավորելու, խմբային աշխատանքները կազմակերպելու համար. օրինակ՝ հնարավոր է, որ լսարանում լինեն նաև սփյուռքահայ անգլախոս ուսանողներ, ովքեր հայերեն գրել-կարդալ չգիտեն, չեն կարողանում հայերեն խոսք կառուցել, բայց հասկանում են հայերեն և մյուսներից շատ ավելի արագ են կատարում հանձնարարությունները:

Առարկաները, դրանց հատկությունները, դրանք համրելու, զանազան գործողություններ անվանելու պահանջմունքը մարդուն ստիպել է իր իսկ արտաբերած հնչյունախմբերը, ձայնարկությունները զգայական արտահայտությունների մակարդակից վերածել հողաբաշխ խոսքի: Այս դեպքում՝ արտասահմանցի ուսանողներին հայերեն դասավանդելու պարագայում, տեղեկատվության նյութ է մի այլ՝ օտար լեզու, որն է՝ հայերենը: Լեզվի շնորհիվ մարդն ընկալում է աշխարհը ոչ միայն իր զգացողությամբ ու մտքով, այլև ուրիշների կողմից տրվող տեղեկատվությամբ: Այսպիսով՝ իրագործվում է երկու գործընթաց՝ մտքերի արտահայտում խոսողի կամ բացատրողի կողմից և այդ մտքերի ընկալում լսողի, տվյալ դեպքում, արտասահմանցի ուսանողների կողմից: Լեզվի միջոցով մեր անձնական մտքերը մեր անձնական սեփականությունից դառնում են ուրիշի սեփականությունը: Այսինքն՝ լեզուն հաղորդակցության միջոց է, մտածողության գործիք, որը կյանքում դրսևորվում է խոսքի ձևով: Խոսքը լեզվի դրսևորումն է, որն իրականանում է լեզվական միջոցներով: Խոսքը կենդանի լեզուն է: Խոսքով են որոշվում խոսողի ոչ միայն լեզվական կարողությունները, այլև խոսողի մտավոր զարգացածության աստիճանը, անգամ բնավորության որոշ գծեր: Այդ իսկ պատճառով, որևէ նոր լեզու սովորելիս շատ կարևոր է մայրենի լեզվի կամ առաջին բնականության վայրի լեզվի իմացության մակարդակը, որը գերիշխող նշանակություն ունի նոր լեզու յուրացնելու գործում: Յուրացման ընթացքում օտարալեզու ուսանողը ստացած գիտելիքը, բացատրված նյութն իր մայրենի լեզվի մտածողությամբ վերածում է ներքին խոսքի, ըմբռնում է այն ու արդեն ըմբռնելուց հետո յուրացվածը ներկայացնում է հայերենով:

Խոսելու ժամանակ մտքերի փոխանակումը մարդկանց միջև տեղի է ունենում երկու ձևով՝ մտքերի հաղորդում խոսողի կամ գրողի կողմից, և դրանց ընկալում լսողի կամ կարդացողի կողմից, այսինքն՝ հաղորդումն ու ընկալումը միևնույն երևույթի բաղադրիչներն են: Փոխադարձ ըմբռնում լինում է միայն այն ժամանակ, երբ լսողի

ուղեղում առաջ են գալիս խոսողի արտահայտած պատկերացումներն ու մտքերը: Այսպիսով՝ կենդանի հնչող ու լսվող խոսքը դառնում է հաղորդակցման, մտքերի փոխանակման ու փոխադարձ ըմբռման հանրամատչելի միջոց: Մերտորեն կապված լինելով միմյանց՝ պետք է նշել, որ լեզվի և խոսքի ուսումնասիրման բնագավառները տարբեր են: Եթե լեզվի ուսումնասիրման բնագավառը պատկանում է լեզվաբանությանը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով, ապա խոսքը, որպես լեզվի միջոցով մարդկանց հետ հաղորդակցվելու բարդ գործընթաց՝ իր ֆիզիկական ու ֆիզիոլոգիական, հոգեբանական ու լեզվական մի շարք առանձնահատկություններով ավելի շատ լեզվի դասավանդման ձևերի ու մեթոդների խնդրո առարկան է:

Խոսքի ձևերն ու տեսակներն իրենց բնույթով բազմազան են, ուստի երկրորդ կամ մի նոր լեզու յուրացնող ուսանողի մոտ **արագ արդյունք** ստանալու համար դրանք սկսում ենք ուսուցանել գուգահեռաբար՝ ներկայացնելով թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը:

Օտար լեզու յուրացնելու միտումները մեծահասակների համար ավելի մեծ դժվարություն են ներկայացնում, քան կրտսեր և դեռահաս սովորողների համար: Այդ պատճառով անհրաժեշտ է մի փոքր փոխել ուսուցանելու հնարները: Այս առումով, շահեկան է կիրառել Մ. Աստվածատրյանի օտար լեզու ուսուցանելու մեթոդները²¹, որոնք, ըստ էության, համապատասխանում են դեռահասներին օտար լեզուն երկարաժամկետ ուսուցանելու ծրագրին: Մեր պարագայում առավելաբար անհրաժեշտ է կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն **կարճաժամկետ ուսուցման փուլերին**: Այս առումով, նախ պետք է ապահովել ուսումնասիրվող նյութի **բազմազանությունը**: Դասի մեթոդական կառուցվածքի հիմքում պետք է ներառել դասավանդվող նյութի հանդեպ ուսանողների շրջանում հետաքրքրություն առաջացնելուն միտված այնպիսի մեթոդներ, դասի նպատակի իրագործման համար անհրաժեշտ այնպիսի հնարներ, որոնց իրագործումը կապահովի գիտելիքի հանդեպ ուսանողների **հետաքրքրասիրությունը**, կակտիվացնի նրանց: Դասի բովանդակությունը կառուցելիս հարկավոր է մի դասանյութից մյուսին անցումը ճկունությամբ կազմակերպել, և հարցադրումներն այնպես կազմել, որ դրանք բավարարեն **խմբային պահանջումները**: Խմբային պարապմունքների ընթացքում հմուտ դասախոսը հետևում է, որ ոչ մի ուսանող անգործ չմնա. **անհատական աշխատանքի** համար կազմված **վարժությունները** նպաստում են այս գործընթացին, որոնք ուսանողին ստիպում են **մտածել**: Ուշադրությունը սևեռած պահելու խնդիր չի առաջանում անհատական պարապմունքների ժամանակ, թեպետ դարձյալ պետք է ապահովել դասանյութի թե՛ բովանդակային, թե՛ մեթոդական բազմազանությունը:

Հուզական գործոններից ուսանողի դրական ինքնագնահատականը, սեփական կարողությունների գնահատումը և անկաշկանդ լինելու առավելության գիտակցումը կարող են նպաստել առաջադրանքների հաջող կատարմանը: Սովորողները պետք է դրսևորեն անհրաժեշտ ինքնավստահություն, քանի որ դա կարող է փոխներգործել դասի ընթացքի վրա. օրինակ՝ պարզաբանում ստանալու համար միջամտելը, անհրաժեշտ եզրակացություններ անելը և այլն: Դասախոսը պետք է փորձի սովորողին հնարավորինս ամբողջությամբ ներգրավել դասագործընթացին, անհրաժեշտության դեպքում **խրախուսել, գովասանքի արժանացնել** առավել աշխատասերին, հետաքրքրասերին, մրցունակին:

Խմբային պարապմունքների ընթացքում ուսանողների **խոցելիության նվազեցումը, սթրեսների, տագնապայնության պակասեցումը** նույնպես շատ կարևոր հանգամանքներ են:

²¹ Աստվածատրյան Մ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա 1985թ. , 390 էջ:

Դասավանդողը պետք է աշխատի ուսանողին դրդել միտքը սուր պահելուն, որպեսզի նա խանդավառված լինի իմացածը ցուցադրելու, դասավանդողի հարցերին փորձի ավելի արագ և ճշգրիտ պատասխանել և նախանձախնդիր լինի ավելի բարդ նյութ յուրացնելիս: Սակայն այստեղ կարող է ուրիշ բարդություն ծագել, այն է՝ միջնորդ լեզվի՝ տվյալ դեպքում անգլերենի թերի իմացությունը: Ուստի, դասավանդողը հնարավորինս պետք է քիչ օգտվի **միջնորդ լեզվի օժանդակությունից**: Նշելի է, որ մեր հայ ուսանողների մեծամասնությունը լիարժեք չի տիրապետում անգլերենին, որի պատճառով դժվարանում է շփումը օտարախոսների հետ. օտարախոսների և տեղաբնակների **փոխադարձ հաղորդակցությունը** նույնպես օրախնդիր է: Այդ պատճառով ուսանողներն իրենց հուզող հարցերով հաճախ են դիմում դասավանդողին. ասենք՝ իրենց սովորեցնել հաղորդակցվելու վարձակալած բնակարանի տանտիրոջ հետ: Ուստի, կարելի է վաղօրոք պատրաստել համապատասխան բառաշար և ներկայացնել այս դասանյութն ամբողջ խմբին:

Հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսուցման մեթոդական հաջորդ հնարը ուսանողներին խանդավառված, ոգևորված պահելն է ազատ, **անկաշկանդ միջավայրում**: Չափահաս ուսանողը չպետք է վախենա սխալներ թույլ տալուց: Հայտնի արտահայտություններ կան՝ Տնփորել սեփական սխալների վրա՝ կամ Տնփորել ուրիշի սխալների վրա: Այս երկու արտահայտություններն էլ շատ օգտակար են օտար լեզվի դասավանդման ընթացքում, ուստի օտարախոս ուսանողի համար լսարանում պետք է ստեղծել **բարոյահոգեբանական** այնպիսի **մթնոլորտ**, որ նա անհարմար չզգա արտահայտվելուց, ինչ էլ թե կարող է սխալվել:

Հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսուցման **հենց սկզբից դասավանդման** ընթացքում կատարվում է **բառային աշխատանք**: Բառախումբը՝ տեքստից առանձնացված, սուկ բառաշար է և պիտանի է միայն ուղեղը հոգնեցնելուն: Մինչդեռ տեքստին զուգահեռ հանձնարարված բառաշարը յուրացնելը օգտակար աշխատանք է, մանավանդ, երբ ժամանակ առ ժամանակ ուսանողը վերանայում է և կրկնում անցածը: Պետք է կարողանալ ճիշտ դասդասել **թեմատիկ բառաշարերը** և առաջնությունը տալ իրենց կենցաղում մեծ անհրաժեշտություն ներկայացնող բառախմբերին: Ուսանողներն ամենից արագ սովորում են ֆինանսական խնդիրներին վերաբերող բառերն ու բառակապակցությունները, և շահեկան է, որ թվականներին վերաբերող դասանյութը ծրագրում առաջնություն ունենա:

Ներկայումս անհրաժեշտ գիտակրթական մակարդակ ապահովելու համար մեթոդաբանական փոփոխությունների մեջ ենթադրվում է նաև **բարձր տեխնոլոգիաների ներմուծումը** հայերենի դաս:

Ժամանակակից համալսարանները հագեցված են լեզու ուսուցանելու համար կահավորված հատուկ լսողական (լինգաֆոնային) աշխատասենյակներով, համակարգչային և տեսալսողական հատուկ սարքերով (SS սարքերով աշխատելաձևը 21-րդ դարի հրամայականն է): Դասը կարող են հետաքրքիր դարձնել **տեսանյութերը**, սահիկահանդեսները (**սլայդները**): Ընդհանրապես, լեզուներ դասավանդողին մեծապես օգնում է պրոեկտորը (**ուղղորդիչ**), որի օգնությամբ սովորողները գիտելիքն ավելի համակարգված կարող են յուրացնել և դրա շուրջ տարատեսակ աշխատանքներ կազմակերպել: Մասնավորապես բառային աշխատանքը խելամիտ կարելի է կազմակերպել այդ սարքի օգնությամբ:

Դիցուք՝ ուսանողը սովորել է պարզ ածականների շարքը, և շահեկան է ընդլայնել այդ գիտելիքը, ինչպես՝

բարձր- բարձրանալ, բարձրացնել, բարձրագույն, բարձրախոս և այլն:

Համապատասխան գունավոր գրիչով նախապես գրված բառաշարը մեծադիր ուղղորդվում է պատին, և բացատրվում է բառակազմությունը: Սա տեղեկության

ստացման ավելի ակնբախ ձև է: Բացատրությունը ըմբռնելուց հետո դրանցով կազմվում են բառակապակցություններ և գրի են առնվում տետրերում:

Ընդհանրապես, նախկինում լեզու դասավանդողների և ուսումնասիրողների կիզակետում (ֆոկուսում) միշտ եղել է քերականությունը: Հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսուցման դասագործընթացում մենք գերծ ենք մնում քերականական կանոնների ուսուցումից, լեզվական իրողությունները ներկայացվում են կադապարային նմուշներով, օրինակներով: Այդ ամբողջ տեղեկատվությունը կենտրոնացվում է համակարգչի մեջ. մնում է հարցին նոր ձևով մոտենալ: Նոր աշխատելառժը կյանքի կկոչվի, եթե արտասահմանցի ուսանողների հայերենի ամբիոններում անհրաժեշտ վերլուծություններ կատարվեն ու ցուցումներ տրվեն գիտակրթական ներուժն ու բարձր տեխնոլոգիաների հնարավորությունները համատեղելու համար:

Հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսուցման մեթոդական մեկ ուրիշ հնար է դասասենյակում ստեղծել տարբեր **իրադրական երկխոսություններ**: Բհարկե, ճիշտ կլինի իրադրությանը համապատասխան երկխոսություններ հյուսել համապատասխան վայրերում, սակայն գործնականում դա ապահովելը որոշակի դժվարություններ է ներկայացնում՝ կապված դասացուցակի, օտար տարածքում ուսանողների վարվելաձևի հետ և այլն: Իրական կյանքում պատահող իրադրությունների **խաղարկումը** շատ ուսանելի է: Այսպես ավելի լավ են հիշվում թե՛ համապատասխան բառապաշարը, թե՛ հարցական նախադասությունների ձևակերպումը և թե՛ ենթադրվող պատշաճ պատասխանների ուսուցումը, ասենք՝ շուկայում, մթերային խանութում, կանգառում, ճաշարանում, գրադարանում, դեղատանը և այլուր:

Ընդհանրապես, լեզուներ սովորելու ունակությունները մշակվում են ուսումնառության ընթացքում: Գործադրվող մեթոդներն ու հնարները թույլ են տալիս չափահաս սովորողին ավելի արդյունավետ և ինքնուրույն հաղթահարել լեզուներ սովորելու ընթացքում ծագող նոր խնդիրները, տեսնել դրանց լուծման անհրաժեշտ տարբերակները և լավագույնս օգտագործել հնարավորությունները:

Հայերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման աշխատանքային մեկ այլ տեսակ է սովորողների կողմից կատարվող **թարգմանությունը**: Այս մեթոդը կիրառել են մինչև մեր օրերը, և ներկայումս էլ այն գործադրվում է ժամանակակից լեզուներ սովորեցնելիս: Սակայն հայերենի՝ իբրև օտար լեզվի դասավանդման ծրագիրը սահմանափակ ժամաքանակ ունի, ուստի շահեկան է հանձնարարել փոքրիկ թարգմանություններ:

Շարադրանքը ևս մեծ տեղ է գրավում խոսքի մշակմանն ուղղված աշխատանքների ծիրում: Բնականաբար, շարադասությունը մեծ հասկացություն է, և ուսանողների հետ կարելի է հաճախ անդրադառնալ խոսքաստեղծման և խոսքակառուցման գործընթացներին, ինչպես, ասենք, ընկերոջը **բնութագրելու**, քաղաքը, փողոցը **նկարագրելու** համար անհրաժեշտ խոսքաշար ստեղծելուն միտված աշխատանքներն են:

Յուրաքանչյուր դասագործընթացի որոշակի ժամակահատված ենք տրամադրում **հարցական նախադասությունների** ուսումնասիրմանը՝ նախապես ուսուցանելով հարցում արտահայտող բառերը՝ հարցական դերանունները: Օտար միջավայրում ապրող ուսանողների համար սա խիստ անհրաժեշտ դասանյութ է:

Դասավանդման կարևոր բաղադրիչներ են **ստուգումն** ու **ամփոփումը**: <<Ստուգումը անհրաժեշտ է մի շարք պատճառներով: Եվ՝ դասավանդողին, և՛ ուսանողին անհրաժեշտ է իմանալ, թե ինչն է յուրացվել և ինչը՝ ոչ, որտեղ են հաջողությունները, և որտեղ կան խնդիրներ: Դա կարևոր է հետագա ուսուցումը կազմակերպելիս՝ կրկնելու, ճշգրտելու այն, ինչին անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել, որպեսզի ամրակայվեն խնդիրների պատճառները և դրանք վերացնելու ուղիները:>> ²²

²² . Багдасарян Н., Бвйбуртян Н., Геодакян И., Методическое руководство к учебнику "Русский язык", Ереван, 1988, ст. 94.

Վերջին ժամանակներս խիստ արդիական դարձած **թեստային** աշխատանքները իրականում **կիրառական վարժություններ** են, որոնք պետք է կիրառել որևէ ենթաթեմայի, թեմայի, կիսամյակի ավարտից հետո: Թեստերի մեջ պետք է ներառել նաև փոքրիկ **կապակցված խոսք գրելու** առաջադրանքներ:

Վերը նկարագրված աշխատանքները պարտադիր են բոլոր սովորողների համար: Յուրաքանչյուրն ըստ իր ընդունակությունների և հմտությունների կատարում է տրված աշխատանքը և գնահատվում: **Գնահատումը** մեր կողմից դիտվում է ավելի շատ ոգևորելու, խրախուսելու միջոց: Բացթողումների դեպքում սովորողն ունի **հետագայում լրացնելու հնարավորություն**:

Սովորաբար ուսուցման սկզբնափուլում միշտ տեղի է ունենում բառերի ընտրության պայքար, մի տեսակ ստեղծագործական գործընթաց, երբ դերանունը, բայն ու գոյականը դժվարությամբ են գտնում իրենց տեղը, ճշգրտվում են բառերի իմաստը, հերթագայությունը, արտասանությունը, առոգանությունը: Բանն այն է, որ ուսուցման սկզբնական փուլում օտարալեզու ուսանողը բառերի ընտրության մեջ ազատ չէ. նրա բառապաշարը սահմանափակ է (այն դաս առ դաս է ընդլայնվում):

Արտասահմանցի ուսանողների հետ աշխատելիս մենք խիստ տարանջատում չենք դնում գրաճանաչության այբբենական շրջանի և հետայբբենական շրջանի միջև: Հնչյուն-տառերի ուսուցմանը զուգահեռ՝ մենք ուսուցանում ենք բանավոր խոսք: Արտաքին խոսքը հենվում է կադապարային նմուշների, յուրացրած կայուն բառակապակցությունների վրա: Կադապարային նախադասությունները կամաց-կամաց պետք է ընդարձակել՝ ընդգրկելով ածականներ ու մակբայներ, որոնք օրեր անց դառնում են փոքրածավալ կապակցված խոսք և ամեն օր ստանում նոր թեմատիկ բնույթ. <<Ո՞վ եմ ես>>, <<Իմ ընտանիքը>>, <<Ո՞րտեղ եմ ապրում>>, <<Իմ համալսարանը>> և այլն: Որոշ ժամանակ անց ուսուցումն այնքան արդյունավետ է դառնում, որ ավելի բարդ երկխոսությունների ընթերցումից, մեկնաբանումից, բառային աշխատանք կատարելուց հետո առաջ է գալիս ավելի բարդ թեմաներով շարադրություններ գրելու հանձնարարության անհրաժեշտությունը. օրինակ՝ <<Իմ պետությունը>>: Օտարալեզու ուսանողն իր մայրենի լեզվով կատարած նախնական դատողությունները փոխարկում է այլ լեզվով, այս դեպքում հայերենով արտահայտված արտաքին խոսքի և նոր լեզվի յուրացման ընթացքում ծագած ներքին պայքարը վերածվում է հաղթանակի, որը թե՛ այլալեզու ուսանողի, թե՛ նրան դասավանդողի հաղթանակն է (**ուսանող-դասախոս փոխներգործուն մեթոդ**): Իհարկե, այս պայքարում կարևոր կովան է **ուսուցանողի խոսքի գեղեցկությունը, արտահայտչականությունը, ձայնի ելնչումը**. դրսևորումներ, որոնք դասավանդման ընթացքում ըստ էության սկզբունքային նշանակություն ունեն:

Ունենալով պարզորոշ դիտարկումներ այլալեզու ուսանողների հայերենի՝ իբրև օտար լեզվի ուսուցման գրաճանաչության, ընթերցանության, խոսքի զարգացման մեթոդաբանության ուսումնասիրության շուրջ, որոնք կատարել ենք այլալեզու ուսանողներին դասավանդելու ընթացքում, վերլուծական-համադրական մեթոդի կիրառմամբ, ստեղծել ենք և՛ գրելու, և՛ կարդալու, և՛ հնավորինս կարճ ժամանակահատվածում (32 դասաժամ) հայերեն խոսելու հմտությունների ձևավորմանը նպաստող <<Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն>> ձեռնարկը : Այս ձեռնարկը ինքնուսույց չէ, սակայն, մեր կարծիքով, այլալեզու ուսանողին ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն է ընձեռում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, 275 էջ:
2. Աստվածատրյան Մ., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա 1985թ., 390 էջ:
3. Մանուկյան Ա., Խոսքի զարգացումը հայոց լեզվի ուսուցման ընթացքում, Երևան, 1969, 251 էջ:
4. Մուրադյան Լ. Կ., Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն, Երևան, Էդիթ Պրինթ, 2011, 248 էջ:
5. Hinkel Eli, Handbook of research language teaching and learning, New York, 2010, 538 p.
6. Lightbown M. P., Spada N., How languages are learned, Oxford University Press, 1998, 233 p.

РЕЗЮМЕ МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ИЗУЧЕНИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА КАК ИНОСТРАННОГО *Л. К. МУРАДЯН*

Статья посвящена обучению армянского как иностранного языка. После приобретения способности записи и чтения, учащиеся могут читать и переводить тексты, которые включают в себя основные структуры языка и разговорных формул. Это может помочь иностранным студентам в процессе повседневной коммуникации. На основе многолетнего опыта мы разработали методику и представляем наши наблюдения на эту тему.

SUMMARY METHODOLOGICAL BASES OF THE ARMENIAN LANGUAGE STUDY AS A FOREIGN LANGUAGE *L. K. MOORADYAN*

This article is about the acquisition of the Armenian language as a foreign language. After acquisition of writing and reading abilities, the learners can read and translate the texts, which include the basic language structures and conversational formulas. These can help foreign students in everyday leaving and communication process. Having many years of experience, we discuss the Armenian language as a foreign language teaching issues and offer our observations on the subject.